ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

20.05.2024թ. N 02/1.9/7287-2024

«Հետք»-ի լրագրող
պարոն Արեն Նազարյանին
էլ. հասցե arennazaryan20@gmail.com

Հարգելի պարոն Նազարյան

Ի պատասխան Տավուշի մարզի Դովեղ գյուղում կառուցվող դպրոցի վերաբերյալ 2024 թվականի մայիսի 13-ի Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 27-ի N 788-Ն որոշման շրջանակում ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Դովեղ գյուղի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման համար նախապես դիտարկվել էր գործող դպրոցի տարածքը, որի համար 2020 թվականին հայտարարվել է գնման գործընթաց, և արդյունքում «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ի հետ 2020 թվականի նոյեմբերի 26-ին կնքվել է պայմանագիր:

Հետագայում պարզվել է, որ գոյություն ունեցող դպրոցի մի մասը տեղական իշխանության, տարբեր բարերարների և ԱԻՆ Տավուշի մարզի Նոյեմբերյանի ՀՕՊ ՀՓՋ-ի ուժերով վերանորոգվել և կահավորվել է՝ Դովեղի ՀՕՊ հրշեջ-փրկարարական ծառայության կարիքների համար: Նշված տարածքը հետագայում ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հանձնվել է ԱԻՆ-ին:

Վերոնշյալով պայմանավորված՝ շինարարական աշխատանքները չեն մեկնարկել:

Տավուշի մարզի Դովեղ գյուղի կարիքների համար նոր հողահատկացման նպատակով 2020 թվականի փետրվարին ՀՀ Տավուշի մարզպետը Քաղաքաշինության կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) է ներկայացրել դպրոցի տեղակապման համար համայնքի կողմից ընտրված մի քանի հողատարածքի տարբերակներ: Կոմիտեի և

տիպային նախագիծը մշակող «Հայնախագիծ» ԲԲ ընկերության ներկայացուցիչներն այցելել են Դովեղ համայնք՝ ներկայացված տարածքներն ուսումնասիրելու նպատակով, որտեղ համայնքի ղեկավարի, մարզպետարանի պատասխանատուների և համայնքի բնակիչների հետ համատեղ քննարկվել են առաջարկված տարբերակները: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ համայնքի կողմից առաջարկված բոլոր հողատարածքներն ունեն ռելիեֆային վատ պայմաններ և որոշ դեպքերում՝ ոչ բավարար մակերես:

Սակայն ելնելով տվյալ համայնքում դպրոց կառուցելու անհրաժեշտությունից՝ հողամասերից ընտրվել է առավել բարենպաստ պայմաններ ունեցող տարբերակը:

Այդ հողատարածքում դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման համար անհրաժեշտ մակերեսն ապահովելու նպատակով անհրաժեշտություն էր եղել ձեռք բերել համայնքային հողին հարող մասնավոր սեփականություն հանդիսացող հողակտորներից մի քանիսը: Դրանց սեփականատերերի նախնական համաձայնությունն ունենալով՝ տրվել էր հանձնարարական «Հայնախագիծ» ԲԲ ընկերությանը՝ իրականացնելու համապատասխան ուսումնասիրություններ, գրունտային պայմանների գնահատում՝ տեղակապման նախագծի մշակման համար: Այդ եղանակով նախագիծը կյանքի կոչելու դեպքում շինհրապարակը ճանապարհից բավականաչափ հեռավորություն կունենար, ռելիեֆի առանձնահատկությունները լրացուցիչ բարդություններ չէին առաջացնի:

Մինչդեռ հետագայում այդ հողամասերի սեփականատերերը հրաժարվել են նախնական համաձայնությունից, ինչի պատճառով անհրաժեշտություն է առաջացել տիպարային նախագիծը տեղակապել միայն համայնքապատկան հողատարածքում:

«Հայնախագիծ» ընկերության իրականացրած վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ ռելիեֆային առանձնահատկություններից և ճանապարհի առկայությունից ելնելով՝ նշված տարածքին համապատասխան տեղակապման նախագիծ մշակելու համար անհրաժեշտ է նախատեսել հենապատ, հողային աշխատանքների ծավալի ավելացում, որոնք կհանգեցնեն ընդհանուր նախահաշվային արժեքի ավելացման:

Դովեղի միջնակարգ դպրոցը ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 27-ի N 788-Ն որոշմամբ ընդգրկված է «Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում» ծրագրի ցանկում: Ուստի հաշվի առնելով Դովեղ բնակավայրում դպրոց կառուցելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ընտրված հողատարածքից զատ այլընտրանքի բացակայությունն ու ժամկետի

սղությունը՝ Կոմիտեի հանձնարարությամբ «Հայնախագիծ» ԲԲ ընկերությանն առաջարկվել է շարունակել նախագծային աշխատանքները և նախագիծը տեղակապել հատկացված տարածքում:

Շինարարական աշխատանքները փաստացի մեկնարկել են 2022 թվականի տարեվերջից և իրականացվել 2023 թվականի ընթացքում, որի շրջանակում կապալառուի կողմից իրականացվել են դպրոցի շենքի հիմնակմախքի ստորին հատվածի կառուցման աշխատանքները: Հենապատերի կառուցման ծավալները կապալառուի պայմանագրում ավելացվել են 2023 թվականին, սակայն ծրագրի իրականացման փուլում, ելնելով իրադրությունից, միջոցներ են ձեռնարկվում հենապատի ծավալն առավելագույնս նվազեցնելու ուղղությամբ:

Հարգանքով՝

պարտականությունները կատարող

Ստորագրող
ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ
1810760100

2024-05-20 15:58:03 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

«_____» _____ 20__ թ.

Մամուլի քարտուղար Գայանե Ավագյան, հեռ. 011 621 711